Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

2024

ԶԵԿՈՒՅՑ

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ԵՎ
ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

@euinarmenia

Զեկույցը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝«Սոցիալական արդարության հասանելիության ընդլայնում Հայաստանում տեղահանվածների և փախստականների համար» ծրագրի շրջանակում:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում զեկույցի հեղինակը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Զեկույցի հեղինակ՝ Կատրին Հակոբյան
«Տրանս ազգային կոալիցիա» իավապաշտպան ՀԿ
Մարդու իրավունքների ծրագրերի ղեկավար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....3
- ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....5
- ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....9
- ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....12

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի մայիսի **25**-ին Երևանում տեղի ունեցավ վերապատրաստման դասընթաց, որի ընթացքում **20** պարալեգալներ խորացված ուսուցում ստացան մարդու հիմնարար իրավունքների, խարանի և խտրականության, բռնության դեպքերի փաստագրման և գործերի վարման ուղղությամբ, ինչպես նաև նախնական իրավաբանական խորհրդատվության տրամադրման և շահառուներին աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ:

Վերապատրաստված պարալեգալներից ընտրվել են **10** լավագույնները՝ Հայաստանում հաստատված տեղահանվածներին և փախստականներին խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու համար:

Պարալեգալը այն անձն է, որը չունի բարձրագույն իրավաբանական կրթություն, սակայն անցել է պատրաստություն և տրամադրում է հիմնարար իրավաբանական խորհրդատվություններ, ինչպես նաև ուղղորդում է իր շահառուներին օգտվելու կազմակերպությունների կողմից տրամադրվող այլ ծառայություններից:

Այս զեկույցում կներկայացվեն վերոնշյալ խորհրդատվությունների ընթացքում բացահայտված դեպքերը: Տվյալները մուտքագրվել են մոնիթորինգի և իրավունքների խախտումների արձագանքման **REAct** համակարգ՝ համապատասխան ռեակտորների կողմից:

Տվյալների հավաքագրման նպատակն է՝ բացահայտել մարդու իրավունքների խախտման դեպքերը, մասնավորապես՝ Հայաստանի տեղահանվածների և փախստականների իրավունքների խախտումները:

Տվյալների հավաքագրման գործընթացը՝ հարցազրույցների միջոցով: Բոլոր հարցազրույցները անցկացվել են անձամբ և կամավորության սկզբունքով:

Տեղեկատվության աղբյուրները՝ իրավախախտումներից տուժած անձինք, ինչպես նաև համապատասխան տեղեկատվություն ունեցող անձինք:

Հավաքագրված տվյալների մշակում՝ զեկույցում առանձնացված են այն դեպքերը, որոնցում նկարագրված են առավել տարածված և ռազմավարական նշանակություն ունեցող իրավունքների խախտումները:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

1

Մի հնդիկ կին, որ ապրում է ՄԻԱՎ-ով և դրա մասին տեղեկացրել է այն հոսթելի տնօրենությանը, որտեղ ապրում է Հայաստանում, մի օր վատանում է և բուժօգնության կարիք է ունենում: Հոսթելի մենեջերը շտապօգնություն է ահազանգում, բրիգադը մոտենում է և արդեն զգացվում է, որ զզվանքով է արձագանքում, որ պետք է բուժօգնություն տրամադրեն հնդիկի, սակայն վախենալով արձագանքից ամեն դեպքում ստուգում են ճշնումը և ջերմությունը, տեղեկացնում են, որ լուրջ բան չկա: Հետո կնոջից հարցնում են, թե ինչ հիվանդություններ ունի, կինը անկեղծորեն պատասխանում է՝ մտածելով, որ ՄԻԱՎ-ը կարող է կապ ունենալ իր վատ ինքնազգացողության հետ: Իմանալով կարգավիճակի մասին՝ բժիշկները խուսափում են սրսկում անելուց, ինչը արդեն պատրաստվում էին անել, ասում են, որ լավ կլինի տեղափոպել հիվանդանոց: Հոսթելի բուժքույրը առաջարկում է ինքը անի սրսկումը, եթե լուրջ բան չկա և անհրաժեշտություն չկա տեղափոխելու:

2

Արցախցի տեղահանված ընտանիքը վարձով բնակարան էր փնտրում: Նրանք բնակարանի տիրոջ հետ ծանոթացել են համացանցում տեղադրված հայտարարության միջոցով: Հանդիպմանը նրանց շատ են դուր եկել բնակարանի պայմաններն ու ցածր գինը: Սեփականատերն ասել է, որ այս կերպ ցանկանում է օգնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված հայրենակիցներին: Վստահելով և կանխավճար թողնելով՝ տուժածները սկսեցին նախապատրաստվել տեղափոխվելուն: Բայց բնակարանի սեփականատերը անհետացել էր: Նրանք հայտնվել են փողոցում և առանց գումարի: Պարզվել է, որ այդ անձը նույնիսկ բնակարանի սեփականատերը չի եղել: Խարդախներն օգտվում են տեղահանվածների ծանր վիճակից և խաբեբայությամբ են զբաղվում:
Տուժածներին օգնություն է ցուցաբերվել ժամանակավոր կացարանի տեսքով և հաճախորդին ուղեկցել են իրավապահ մարմիններին դիմելիս:

ՀԱՋՈՂՎԱԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

3

Երիտասարդ հնդիկը մասնակցել է փաբի միջոցառմանը: Միջոցառման էջում հայտարարվել է այդ երեկոյի հյուրասիրությունների մասին: Սպասարկող անձնակազմը երեկոյի սկզբից արդեն շատ տհաճ է վերաբերվել նրան: Ինչպես նաև ընթացքում տղան նկատում է, որ մատուցողները հյուրասիրում են բոլորին, բացի իրենից: Այդ ժամանակ նա որոշում է դիմել և հարցնել մատուցողներից մեկին, թե ինչու իրեն ոչինչ չի հասել: Նրան պատասխանում են, որ պետք է վճարի դրա համար:
Այնուհետև տուժողը դիմում է պարալիգալին և պատմում իրավիճակը: Պարալեգալն իր հերթին խոսում է մենեջերի հետ: Դրանից հետո մենեջերը մոտենում է տուժածին և ներողություն խնդրում, նաև ասում է, որ իր ամբողջ պատվերը կլինի անվճար, և պետք չէ փակել Հաշիվը:

4

Տուժածը փախստական է Ուկրաինայից: Նա արդեն երկու ամիս է, ինչ ապրում է Դիլիջան քաղաքում :
Նրա մոտ ծանր ալերգիա է առաջացել և նա շտապօգնություն է կանչել: Բժիշկները եկել են և ասել, որ շտապ հոսպիտալացում է պետք:
Հիվանդանոցում բժիշկը հետաքրքրվել է, թե ինչ հիվանդություններ ունի հիվանդը և արդյոք նախկինում ալերգիա ունեցել է: Հաճախորդը խոստովանել է, որ ինքը ՄԻԱՎ ունի:
Բժիշկը նյարդայնացած հեռացել է հիվանդասենյակից : Եվ երբ նա վերադարձել է, արդեն ձեռնոցներով ու դիմակով է եղել: Ասել է, որ ոչնչով չի կարող օգնել, և հիվանդը պետք է մեկ այլ հիվանդանոցի դիմի Երևանում:

Երկար բանակցություններից հետո հիվանդը դիմել է պարալեգալի:

Պարալեգալը խնդրել է հեռախոսը փոխանցել բժշկին: Բայց նա չի ցանկացել խոսել : Այդ ժամանակ պարալեգալը շտապ ուղևորվել է հիվանդանոց՝ ճանապարհին կապվելով առողջապահության նախարարության թեժ գծին:
Երբ նա ժամանել է դեպքի վայր, պարզվել է, որ արդեն կապվել են բժշկի հետ, և բժիշկն արդեն հիվանդին բուժօգնություն է տրամադրել և հիվանդասենյակ: Նա ներողություն է խնդրել և ասել, որ սա իր պրակտիկայում առաջին դեպքն է, ուստի նա վախեցել է: Պարալեգալը նրա հետ ուսուցողական զրույց է անցկացրել ՄԻԱՎ-ի թեմայով:

5

Տուժածը սեքս ծառայություններ էր մատուցում փողոցում, երբ նրան մոտեցել են ոստիկանները: Իմանալով, որ նա ՀՀ քաղաքացի չէ՝ նրանից մեծ գումար են պահանջել տուգանքի տեսքով՝ սեքս աշխատանք իրականացնելու համար: Նրան մեղադրել են հայկական օրենքները չհարգելու մեջ: Երբ տուժողը հրաժարվել է վճարել տուգանքը, քանի որ չուներ այդքան գումար, նրան տարել են ոստիկանություն: Բաժանմունքում նրան օգնության է հասել պարալեգալը և զրուցել ոստիկանների հետ: Նրանք խոստովանել են, որ իրավունք չունեն պահանջելու այդքան մեծ գումար և ազատ են արձակել տուժողին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի շրջանակներում վերապատրաստված պարալեգալները տրամադրել են **62** իրավաբանական խորհրդատվություն, որից արձանագրել են մարդու իրավունքների խախտման **26** դեպք տեղահանվածների և փախստականների շրջանում:

Ամենից հաճախ խախտվել են այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են՝



Որոշ դեպքերում խախտվել են անձանց մեկից ավելի իրավունքներ:

Ինչպես արդեն երևում է վիճակագրությունից, մեծամասնություն են կազմում անծանոթների կողմից կատարված իրավախախտման դեպքերը: Այն ևս մեկ անգամ փաստում է ՀՀ-ում տեղահանվածների և փախստականների նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի, խարանի և խտրականության բարձր ցուցանիշի մասին:

Տուժողները մեծամասամբ չեն ցանկանում իրավախախտումների գործերով դիմել իրավական մարմիններին, քանի որ վերջիններիս կողմից առկա է կողմնակալ վերաբերմունք: Այդ և այլ պատճառներով պայմանավորված՝ անձինք մեծամասամբ չեն ցանկացել գործերին ընթացք տալ:



ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղահանվածների և փախստականների պայմանները Հայաստանում բարելավելու համար կարևոր է ընդունել համապարփակ միջոցառումներ, որոնք ընդգրկում են իրավական, սոցիալական, տնտեսական և կրթական ասպեկտներ: Ահա մի քանի հիմնական ուղղություններ՝

1. Օրենսդրական բազայի և իրավապահության կատարելագործում:

- Աշխատանքի իրավունքների պահպանման և դատական պաշտպանության հասանելիության ապահովում:
- Ստատուսի ստացման և այլ բյուրոկրատական գործընթացների հեշտացում:

2. Սոցիալական ինտեգրում և խտրականության դեմ պայքար:

- Կրթական արշավների անցկացում տեղական բնակչության համար՝ միգրանտների և փախստականների դերի ու ներդրման մասին:
- Խտրականության և պիտակավորման դեմ միջոցների ուժեղացում, ներառյալ միգրանտների և տեղական բնակիչների միջև երկխոսության հարթակների ստեղծումը:

3. Տնտեսական աջակցություն և աշխատանքի տեղավորում:

- Միգրանտների և փախստականների համար մասնագիտական պատրաստման ծրագրերի ընդլայնում, որպեսզի նրանք կարողանան ավելի արագ ինտեգրվել տնտեսության մեջ:

- Աշխատանքի հնարավորությունների ստեղծում, հատկապես որակավորված միգրանտների համար, որպեսզի նրանք կարողանան ներդրում ունենալ Հայաստանի տնտեսության մեջ:

4. Առողջապահական և սոցիալական ծառայություններին հասանելիություն:

- Առողջապահական ծառայություններին հասանելիության բարելավում, հատկապես հոգեբան-սոցիալական աջակցության, հաշվի առնելով, որ շատ միգրանտներ և փախստականներ բախվում են տրավմաների:

- Փախստականների և միգրանտների երեխաների կրթությանը հասանելիության ապահովում, ինչը կօգնի նրանց ավելի հաջող ինտեգրվել հասարակությունում: